կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N – Հավելվածում**:

Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10-օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փուլերով ընդունելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ: Գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, բացառությամբ ԱԱՀ-ի, ինչպես նաև Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Սույն պայմանագրով նախատեսված գործարքը անմիջականորեն կապված է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հարավային Կովկասում Անդրսահմանային Միացյալ Քարտուղարության և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 2013 թվականի հուլիսի 26-ին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի բարեգործական որակված ծրագրի իրականացման հետ, և նրա վրա տարածվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետով նախատեսված արտոնությունները:

5.1.1 Պայմանագրի գնից՝ ----- (-----) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20 թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե

Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**** Եթե ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կապալառուն է պատասխանատվություն կրում ենթակապալառուի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.8 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Դիլիջան մ/ճ

ՀՀ 247250000699

ՀՎՀՀ 07610657

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն

Ա. Դավթյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՀՀ _____

ՀՎՀՀ _____

(ստորագրություն)

Կ.Տ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**«Ժամանցային կենտրոնների կառուցման» աշխատանքների կատարման****E1 երթուղի՝ ք. Դիլիջան – Մաթոսավանք.**

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
1	Երթուղու բարեկարգում՝ խանգարող ճյուղերի էտում, դժվարանցանելի հատվածներում փայտե և հողե աստիճանների կառուցում:		---		
2	Երթուղու ամբողջ երկայնքով կողմնորոշիչ ցուցանակների տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 12/	հատ	8		
3	Երթուղու սկզբնամասում փայտե տեղեկատվական կետի տեղադրում , որը հնարավորություն կտա զբոսաշրջիկներին պատասպարվելու արևից, քամուց և անձրևից: Տեղեկատվական կետը կունենա 2մx3.5մ չափսեր, կունենա ծածկ, իսկ բարձրությունը կլինի 3մ: Կառուցիչ 2 կողմը կլինի փակ , որոնց վրա փակցված կլինի երթուղու վերաբերյալ տեղեկատվություն հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, կլինի երթուղու սխեմատիկ պատկերը, ինչպես նաև նկարներ: Տեղեկատվությունը, նկարները և սխեմատիկ պատկերները պետք է տպագրված լինեն բանեռի վրա: Տեղեկատվական կետում պետք է տեղադրված լինի 1 նստարան՝ 2մx0.4մ չափսի, և 1 աղբաման՝ 30սմ տրամագծով և 50 սմ բարձրությամբ: /Տես ճարտարապետական մասեր10, 11 և 17/	հատ	1		
4	Վանքի մոտ տեղեկատվական վահանակի տեղադրում, որի վրա հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով տպագրված կլինի տեղեկատվություն վանքի պատմության վերաբերյալ: Տեղեկատվությունը պետք է տպագրված լինի բանեռի վրա: /Տես ճարտարապետական մաս 8/	հատ	1		
5	Մաթոսավանքից 300 մ հեռավորության վրա 40 անձի համար նախատեսված ճամբարային տարածքի հիմնում: ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ 1. Տարածքի բարեկարգում, 2. Տարածքի ապահովում խմելու ջրով, 3. Նստարանների տեղադրում /10 հատ/, 4. Սեղանների տեղադրում /5 հատ/, 5. Աղբամանների տեղադրում /4 հատ/, 6. Սանհանգույցների կառուցում /2 հատ/, 7. Կրակարանների կառուցում /4 հատ/: /Տես ճարտարապետական մասեր5, 6, 9, 12 և 18 /		---		

E4 երթուղի՝ Պարզ լիճ - Գոշավանք

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
1	Երթուղու բարեկարգում՝ խանգարող ճյուղերի էտում, դժվարանցանելի հատվածներում փայտե և հողե աստիճանների կառուցում:		---		
2	Երթուղու ամբողջ երկայնքով կողմնորոշիչ ցուցանակների տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 12/	հատ	14		
3	Երթուղու սկզբնամասում տեղեկատվական վահանակի տեղադրում, որի վրա հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով տպագրված կլինի տեղեկատվություն երթուղու, ինչպես նաև այնտեղ հանդիպող ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ: Տեղեկատվությունը պետք է տպագրված լինի բանեռի վրա: /Տես ճարտարապետական մաս 7/	հատ	1		
4	Կամուրջների կառուցում, որը զբոսաշրջիկներին հնարավորություն կտա անարգել և անվտանգ անցնել երթուղում առկա առվակները: /Տես ճարտարապետական մաս 16/	հատ	2		

5	Երթուղու միջնահատվածում տաղավարի կառուցում /2.5մx3մ/, որը զբոսաշրջիկներին հնարավորություն կտա հանգստանալու, համոտեսելու հայկական ավանդական սննդատեսակներ, ինչպես նաև պատասխարվել արևից և անձրևից:/Տես ճարտարապետական մաս 2/	հատ	1		
---	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----	---	--	--

E6 երթուղի՝ Աղվանականի եկեղեցի – Կենու պուրակ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
1	Երթուղու բարեկարգում՝ խանգարող ճյուղերի էտում, դժվարանցանելի հատվածներում փայտե կողի աստիճանների կառուցում:		---		
2	Երթուղու սկզբնամասում տեղեկատվական վահանակի տեղադրում, որի վրա հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով տպագրված կլինի տեղեկատվություն երթուղու, ինչպես նաև այնտեղ հանդիպող ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ: Տեղեկատվությունը պետք է տպագրված լինի բանետի վրա:/Տես ճարտարապետական մաս 7/	հատ	1		
3	Երթուղու երրորդ գետնանցումի վրա կամուրջի կառուցում, որը զբոսաշրջիկներին հնարավորություն կտա անարգել և անվտանգ անցնել առվակը:/Տես ճարտարապետական մաս 16/	հատ	1		

E10 երթուղի՝ ‘Դիլիջան’ ԱՊ – Ջրվեժ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
1	Երթուղու բարեկարգում՝ խանգարող ճյուղերի էտում, դժվարանցանելի հատվածներում փայտե կողի աստիճանների կառուցում:		---		
2	Երթուղու ամբողջ երկայնքով կողմնորոշիչ ցուցանակների տեղադրում:/Տես ճարտարապետական մաս 12/	հատ	12		
3	Երթուղու սկզբնամասում տեղեկատվական վահանակի տեղադրում, որի վրա հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով տպագրված կլինի տեղեկատվություն երթուղու, ինչպես նաև այնտեղ հանդիպող ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ: Տեղեկատվությունը պետք է տպագրված լինի բանետի վրա:/Տես ճարտարապետական մաս 7/	հատ	1		
4	Առվակի հարակից տարածքներում գտնվող փոքրիկ ժայռազանգվածների վրա պարանե բազոլիթների տեղադրում, որը զբոսաշրջիկներին հնարավորություն կտա անարգել շարունակել ճանապարհը:	մ	45		

Ջրոսաշրջիկների ժամանցի կազմակերպման տարածքի հիմնման աշխատանքներ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
1	Փայտե փոքրիկ տաղավարի կառուցում /2մx3մ//Տես ճարտարապետական մաս 15/	հատ	1		
2	Փայտե տաղավարների կառուցում/3մx4մ/, որոնք զբոսաշրջիկներին հնարավորություն կտան հանգստանալու և համոտեսելու հայկական ավանդական սննդատեսակներ, /Տես ճարտարապետական մաս 14/	հատ	4		
3	Սանհանգույցների կառուցում /սեպտիկոր//Տես ճարտարապետական մաս 9/	հատ	2		
4	Տարածքի ջրաֆիկացում		---		
5	Տարածքի կանաչապատում	մ/ք	700		

Կատարվելիք աշխատանքների քանակական և ֆիզիկական բնութագիր

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափս	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
1	Բարեկարգման աշխատանքներ՝ խանգարող ճյուղերի էտում, դժվարանցանելի հատվածներում փայտե կողի աստիճանների կառուցում:		---	Ըստ անհրաժեշտության /ԱՊ-ի էկոտուրգմի և ռեկրեացիայի բաժնի հետհամաձայնեցում/		
2	Կողմնորոշիչ ցուցանակների տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 12/	40սմ x 20սմ	հատ	34		
3	Փայտե տեղեկատվական կետի կառուցում՝ ներառյալ 1 նստարան /2մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ/ և 1աղբաման /30սմ տրամագծով և 50 սմ բարձրությամբ/:	2մx3.5մ բարձրությունը 3մ	հատ	1		

	/Տես ճարտարապետական մասեր10, 11 և 17/					
4	Փայտե տաղավարի կառուցում՝ ներառյալ 1 սեղան /2մ x 0.8մ, բարձրությունը0.8մ/ և 2 նստարան /2մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ/Տես ճարտարապետական մաս 2 և 17/	2.5մx3մ բարձրությունը 2.5մ	հատ	1		
5	Փայտե տաղավարի կառուցում՝ ներառյալ 1 սեղան /1.5մ x 0.8մ, բարձրությունը0.8մ/ և 2 նստարան /1.5մ x 0.4մ, բարձրությունը0.45մ/Տես ճարտարապետական մաս 15 և 17/	2մx3մ բարձրությունը 2.5մ	հատ	1		
6	Փայտե տաղավարի կառուցում՝ ներառյալ 1 սեղան /2.5մ x 0.8մ, բարձրությունը0.8մ/ և 2 նստարան /2.5մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ/Տես ճարտարապետական մաս 14 և 17/	3մx4մ բարձրությունը 2.5մ	հատ	4		
7	Տեղեկատվական վահանակի կառուցում և տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 8 և 18/	1.2մ x 2.75մ	հատ	1		
8	Տեղեկատվական վահանակի կառուցում և տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 9 և 18/	1.6մ x 2.75մ	հատ	3		
9	Կամուրջի կառուցում և տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 16 և 18/	1մ x 8մ	հատ	3		
10	Սանհանգույցի կառուցում /սեպտիկոր/: /Տես ճարտարապետական մաս 9 և 17/	1.2մx1մ բարձրությունը 2.3մ	հատ	4		
11	Աղբաման /Տես ճարտարապետական մաս 18/	30սմ տրամագիծ և 50սմ բարձրություն	հատ	4		
12	Կրակարանիկառուցում /Տես ճարտարապետական մաս 18/	80սմ x 80սմ բարձրությունը 25սմ	հատ	4		
13	Սեղան /Տես ճարտարապետական մաս 6/	2մ x 0.8մ, բարձրությունը 0.8մ	հատ	5		
14	Նստարան /Տես ճարտարապետական մաս 5/	2մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ	հատ	10		
15	Պարանե բազրիքի տեղադրում	----	մ	45		
16	Ջրաֆիկացման աշխատանք	----	տարածք	2		
17	Կանաչապատման աշխատանք	----	մ/ք	700		
18	Բանեռի վրա գունավոր տպագրություն	----	մ/ք	11		
	Ընդամենը					
	Շահույթ %					
	Ընդամենը					
	ԱԱՀ 20 %					
	Ընդհանուրը					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2

«Արդշինինիվեստսբանկ» ՓԲԸ Դիլիջան մ/ճ

ՀՀ 247250000699

ՀՎՀՀ 07610657

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

տնօրեն

Ա. Դավթյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՀՀ

ՀՎՀՀ

(ստորագրություն)

Կ.Տ.

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Ժամանցային կենտրոնների կառուցման» աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների Անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Բարեկարգման աշխատանքներ՝ խանգարող ճյուղերի էտում, դժվարանցանելի հատվածներում փայտե և հողե աստիճանների կառուցում:	Ըստանհրաժեշտության /ԱՊ-ի էկոտուրգի և ռեկոնստրուկցիայի բաժնի հետհամաձայնեցում/		
2	Կողմնորոշիչ ցուցանակների տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 12/	40սմ x 20սմ 34հատ		
3	Փայտե տեղեկատվական կետի կառուցում՝ ներառյալ 1 նստարան /2մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ/ և 1աղբաման /30սմ տրամագծով և 50 սմ բարձրությամբ/: /Տես ճարտարապետական մասեր 10, 11 և 17/	2մx3.5մ բարձրությունը 3մ 1 հատ		
4	Փայտե տաղավարի կառուցում՝ ներառյալ 1 սեղան /2մx 0.8մ, բարձրությունը 0.8մ/ և 2 նստարան /2մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ/Տես ճարտարապետական մաս 2 և 17/	2.5մx3մ բարձրությունը 2.5մ 1հատ		
5	Փայտե տաղավարի կառուցում՝ ներառյալ 1 սեղան /1.5մ x 0.8մ, բարձրությունը 0.8մ/ և 2 նստարան /1.5մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ/Տես ճարտարապետական մաս 15 և 17/	2մx3մ բարձրությունը 2.5մ 1հատ		
6	Փայտե տաղավարի կառուցում՝ ներառյալ 1 սեղան /2.5մ x 0.8մ, բարձրությունը 0.8մ/ և 2 նստարան /2.5մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ/Տես ճարտարապետական մաս 14 և 17/	3մx4մ բարձրությունը 2.5մ 4հատ		
7	Տեղեկատվական վահանակի կառուցում և տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 8 և 18/	1.2մ x 2.75մ 1 հատ		
8	Տեղեկատվական վահանակի կառուցում և տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 9 և 18/	1.6մ x 2.75մ 3 հատ		
9	Կամուրջի կառուցում և տեղադրում: /Տես ճարտարապետական մաս 16 և 18/	1մ x 8մ 3 հատ		
10	Սանհանգույցի կառուցում /սեպտիկոր/: /Տես ճարտարապետական մաս 9 և 17/	1.2մx1մ բարձրությունը 2.3մ 4 հատ		
11	Աղբաման /Տես ճարտարապետական մաս 18/	30սմ տրամագիծ և 50սմ բարձրություն 4հատ		
12	Կրակարանի կառուցում /Տես ճարտարապետական մաս 18/	80սմ x 80սմ բարձրությունը 25սմ 4 հատ		
13	Սեղան /Տես ճարտարապետական մաս 6/	2մ x 0.8մ, բարձրությունը 0.8մ 5 հատ		
14	Նստարան /Տես ճարտարապետական մաս 5/	2մ x 0.4մ, բարձրությունը 0.45մ 10 հատ		
15	Պարանեբազրիքի տեղադրում	45 մ		
16	Ջրաֆիկացման աշխատանք	2 տարածք		
17	Կանաչապատման աշխատանք	700մ/ք		
18	Բանեղի վրա գունավոր տպագրություն	11 մ/ք		
ԸՆԴԱՄԵՆԸ				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2
«Արդշինհիմվետսբանկ» ՓԲԸ Դիլիջան մ/6
ՀՀ 247250000699
ՀՎՀՀ 07610657
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն

Ա. Դավթյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՀՀ _____
ՀՎՀՀ _____

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		մյուսվար	փետրվար	մարտ	Եկմիս	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	«Ժամանցային կենտրոնների կառուցում»	-	-	-	50%^	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Դիլիջան մ/ճ

ՀՀ 247250000699

ՀՎՀՀ 07610657

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա. Դավթյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՀՀ _____
 ՀՎՀՀ _____

(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «_____» 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝ **Ժամանցային կենտրոնների կառուցման կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 2014թ.

Պայմանագրի համարը՝ «ՀՀ-ԲՆ-ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-14/01»

Պատվիրատուն՝ ի դեմս «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Դավթյանի և Կատարողը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «___» «_____» 2014թ. ից «___» «_____» 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ «ՀՀ-ԲՆ-ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-14/01»

ք.Դիլիջան

«___» «_____» 2014 թ.

«Մասնակցի անվանումը»-ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ «Պատվիրատու») կողմից կազմակերպված՝ «Ժամանցային կենտրոնների կառուցման աշխատանքներ»-ի ձեռքբերման «ՀՀ-ԲՆ-ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-14/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ), պետք է ներկայացնի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «Ժամանցային կենտրոնների կառուցման աշխատանքներ»-ի ձեռքբերման «ՀՀ-ԲՆ-ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-14/01» ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ _____ (_____տառերով) ՀՀ դրամի չափով:

1.1.2 «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը» բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը»-ն հանձնարարում է «Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը» բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Մասնակցի անվանումը»,

«Մասնակցի հասցեն»

«Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը»

h/h -----

տնօրեն -----

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ -----

(ստորագրություն)

Կ.Տ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ՀՀ-ԲՆ-ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-14/01»

ք. Դիլիջան

«___» «_____» 2014 թ.

«Մասնակցի անվանումը», ի դեմս Ընկերության տնօրեն՝ «Ընկերության տնօրենի անուն ազգանունը», որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Ժամանցային կենտրոնների կառուցման աշխատանքներ»-ի ձեռքբերման «ՀՀ-ԲՆ-ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-14/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգին՝ պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված ժամանցային կենտրոնների կառուցման աշխատանքների ձեռքբերման N «ՀՀ-ԲՆ-ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-14/01» գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ _____թվերով _____ (_____տասերով _____) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնելու Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Մասնակցի բանկի անվանումը» կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը», հանձնարարում է «Մասնակցի բանկի անվանումը»-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 2014 թ. _____-ի _____-ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Մասնակցի անվանումը»

«Մասնակցի հասցեն»

«Մասնակցի բանկի անվանումը»

ՀՀ

ՀՎՀՀ

տնօրեն՝ _____
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ _____
(ստորագրություն)

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) _____
հանդիսանում է (անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(Երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում
ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

Երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____ (_____
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված _____
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է
փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում
են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված
պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը _____ (_____
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի
պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և
կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն
ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի
հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և
կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն
ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից
օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող
անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝
յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր
պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը
չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

- 1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին:

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ _____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)